

տեան դորա եւ ոմանք սպասեն, բայց ուամիկք յոյժ, այլ շահն զվնասն չի վճարեր կարծեօքս, մանաւանդ թէ զուր գլխացառութիւն, բայց հանճար դորա առաւել է քան զկարծիս էնթատման մերոյ, տի՛ եւ բախտն յաջողութեան. եւ Աստուած է յաջողօղն ըստ առաքելոյ, եւ օր աւուր բխէ զբան, վաղիւն զիւր հոգասցէ. եւ դա որպէս յուսացեալն է միշտ ի նա, որում փառք եւ պատիւ եւ երկրպագութիւն յաւիտեանս:

- Յերեմիայէ ընկալ զպատգամս նարդենական,
 1682 ԸԶՄՆՆԴԵԱՆԸՆ Քրիստոսի գոլով թուական:
 եւ ի Մինասն հասարակի Ֆէտրարական,
 1131 ՅԻՇԵԱ. ԶԱՀՄԷԹԸԴ Թուականի մեր հայկական:

(Յե՛ս գրութեան). — Փետր. Ժէ Զչիս ի թէսքիէ առնելն զվկայն՝ փաշայն գոչեաց. նս մին զուկիւրտ եմ եւ սա զէնկին, զէ օր ելից ոսկով զվկայսդ լաւութեան դորա, քանզի եւ այրդ ժամանակաւ ի զնտան եմուտ: Վէզիրն ասէ. Գնացէ՛ք հարցիք վասն որո՞յ մտեալ է դա ի բանտ: Եւ վկայն ասաց. Ծ զուռուչ պարտ էի վասն որոյ մտի: Ղազասքէրն ասէ. Պէկլէրպէկիք մտանեն ի բանտ, պիր նէսնէ իլազըմ կէլմէզ: Եւ գնացեալ ի քննութիւն եւ բերին զխապէրն նոյնպէս, եւ ընկալան կարծեմ ի նորայն վկայութիւն: Իսկ միւսոյն լաւութեան ի վկայելն՝ ասէ փաշայն. Սա Լ օր է քանի եկեալ է ի հեռաստանէ: Եւ զազասքէրն ասէ. Մինչեւ Զ ամիս ի տեղի միում թէմէքիւն չլինի ոք՝ ոչ է ընդունելի վկայութիւն: Եւ քննեալ թէ փաշայի ումեմն լեալ թէվապի, վասն որոյ եւ ի դրուց փաշային այնմիկ քննելոց են զհաւատարմութիւն, եւ ապա զբեցցի: Եւ ընդ միւսոյն զի արասցեն զհօճէթն ըստ այսմ ոճոյ մուֆասալ: